ՅՈ՞ ԵՐԹԱՆՔ...

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԵԱՆ

1988թ. հայ ժողովրդի ազատագրական պայքարի ներկայ փուլի աստեղային տարին էր: Կարծես թէ ոչ մի ուժ ի զօրու չէր խարխլելու մեր միասնութիւնն ու համախմբուածութիւնը: Նոյնիսկ կործանարար երկրաշարժը մեզ չշեղեց մեր ուղուց:

Այսօր մեզնից շատերը տարակուսանք ու հիասթափութիւն են ապրում. վիճակագրութիւն ստոյգ չկայ, չեմ պնդում՝ որ տոկոսը: Սակայն իմ խօսքը Ղարաբաղի խնդրին է վերաբերում, որը պէտք է, որ լինէր հիմա խնդիրների առանցքը:

1989թ. կէսերից շօշափելու աստիճան տեսանելի դարձաւ, որ շարժման ղեկավարների քաղաքականութիւնից Ղարաբաղը դուրս է մղւում, թէեւ 1989թ. Դեկտեմբերի 1ի որոշումը կայացաւ ժողովրդի ու շարժման ղեկավարների ճնշման ներքոյ: Հիմա արդէն պարզ է, որ որոշում ընդունել տալը հետապնդում էր իշխանութիւնը գրաւելու նպատակ, ինչպէս նաեւ «Նայիրիտ» գործարանի փակման վերաբերեալ որոշումը: Կենտրոնի վրայ այդ քայլերը ազդեցութիւն չգործեցին, թէեւ ճկուն քաղաքականութիւն վարելու դէպքում կարելի էր այդ քայլերից օգուտ քաղել:

Նոր խորհրդարանը հերթով վերանայում է հնի որոշումները. արդէն կասեցուել է «Նայիրիտ» գործարանի մասին որոշումը, այսօր-վաղը նոյնը կնարուի եւ Ղարաբաղի վերաբերեալ: Այդպիսի թեթեւութեամբ ու դիւրութեամբ կասեցնելով մէկ-երկու տարի առաջ կայացուած որոշումները, անհրաժեշտ է մտածել դրանցից բխող բարոյական, առաջին հերթին՝ ազգավնաս հետեւանքների մասին: Մի՞թէ վերջին երկու-երեք տարուայ որոշումները չեն կայացուել այսօրուայ իշխող քաղաքական կազմակերպութեան ճնշմամբ, ժողովրդի անունից, ժողովրդի շահից ելնելով: Արդ, չե՞ն խարխլւում այդ քայլերով մեր հաւատի հիմքերը...

Այսօր ժողովուրդը երկփեղկուած է. ըստ որում, գործի է դրուել նոյն եղանակը, ինչ կիրառում է կենտրոնը՝ մէկ ազգին միւսի դէմ հանելով: Մեզանում հայաստանցիներն են ոտքի ելել ղարաբաղցիների դէմ: Ղարաբաղի պաշտպանութիւնը ղարաբաղցիների գործն է, պնդում ու քարոզում են բոլոր մակարդակներով: «Մայրաքաղաք» ծրագրի թոթովախօս լրագրող-մեկնաբանը պահանջելու պէս առաջարկում է ղարաբաղցիների հանրահաւաքի ճառախօսին տեղափոխուել Ստեփանակերտ ու այնտեղ ճառել: Ղարաբաղցիների հետեւից կարմիր խնձոր չեն ուղարկել, ինչո՞ւ են եկել...Այդ երբուանի՞ց Հայաստան կոչուող այս փոքրիկ հողակտորը դարձաւ միայն հայաստանաբնակների հայրենիքը, ո՞ւմ արեան գնով ստեղծուեց Հայաստանի հանրապետութիւնը, որի անմիջական ժառանգորդներն են իրենց համարում այսօրուայ պետական գործիչները: Եւ եթէ անդրադառնալու լինենք այն ամօթալի ու ստոր հարցին, թէ որ հայը որտեղից է եկել, ո՞ւր կը հասնենք:

Ղարաբաղի շուրջը լռութիւն է տիրում: Պաշտօնական լրատուական միջոցները երբեմն-երբեմն մի-երկու նախադասութիւն են հրամցնում ժողովրդին: Նստացոյց է, հացադուլ, հանրահաւաքներ են լինում, քար լռութիւն...Մինչդեռ Ղարաբաղում ամեն ժամ արիւն է հոսում: Թող Ղարաբաղն ինքն իրեն ինքնորոշուի: Յանուն Հայաստանի անկախութեան կարելի է զոհել եւ Ղարաբաղը: Միայն թէ դա չարաչար սխալմունք է. այսօր Ղարաբաղը, վաղը Զանգեզուրն ու Մեղրին, յաջո՞րդը...Եւ մի՞թէ ժողովուրդը տեղեակ է, թէ ի՞նչ է կատարւում Գորիսում ու Կապանում, Մեղրիում ու Նոյեմբերեանում, ո՞ւմ է պատկանում Նիւվադին, ովքե՞ր են ապրում Ոսկեպարում...

Որտեղ որ ապրում է ղարաբաղցին, կռուի դաշտում թէ բեմահարթակում, գիտութեան կառուցում, թէ պաշտօնական բարձր բուրգի վրայ, հանդէս է եկել իբրեւ հայ մարդ: Ոչ ոքի իրաւունք չի տրուած օտարելու հայրենիքից, կտրելու մայր ժողովրդից: Գուցէ թէ դա բխո՞ւմ է աշխարհով մէկ թմբկահարուող մեր նորաթուխ ժողովրդավարութեան սկզբունքներից:

Իւրաքանչիւր շարժում ունենում է իր մակընթացութեան ու տեղատուութեան փուլերը: Շարժման ղեկավարութիւնը կամովին յանձն առած անհատները պէտք է կարողանային հաշուարկել՝ օգտուելու ընձեռուած նուազագոյն հնարաւորութիւնից՝ քայլ առ քայլ լուծելու համար հիմնական խնդիրը: Մինչդեռ նրանք մնացին հետեւողական ու հաստատակամ իրենց սխալների մէջ, առանց հաշուի առնելու ուժերի իրական յարաբերութիւնը:

Հարկաւոր է սթափուել, զօրաւիգ կանգնել Ղարաբաղին: Դրա համար անհրաժեշտ է համախմբել ազգի կարող ուժերին, առանց պիտակներ կպցնելու, անկախ քաղաքական, կուսակցական պատկանելիութիւնից, մշակել ճկուն ու ընդունելի քաղաքականութիւն, այլապէս մենք կանգնած ենք պառակտման վտանգի առաջ: